ՆՈՐ ԳՐՔԵՐ

«Պատմութիւն Փարէզի և Վենետայի». «Պատմութիւն Վենետիկ Մայրամին»—աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 306 էջ. գինը՝ 1 ռ. 20 կոպ.

Այս աշխատությունը բովանդակում է երկու գրական հուշարձան՝ առաջինը «Փարեզի և Վենետայի պատմություն» սիրավեպը Հովհաննես Տերոնցու փոխադրությամբ (1587), երկրորդը՝ Խաչատուր Եվդոկացու (Թոխաթցու) «Վենետիկի պատմությունը» (1614)։

Ա. Կ. ՉՈՒԼԱԼՅԱՆ — «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ». Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 5000, 260 էջ. գինը՝ 1 ռ. 05 կոպ.

Մենագրությունում առաջին անգամ լուսաբանվում են ջալալիների շարժումների հետ կապված մի շարք հարցեր (ջալալիների շարժումների նախադրյալները, շարժման ընթացքն ու ունեցած հետևանքները և այլն), ինչպես նաև քննարկվում են տվյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և քաղաքական վիճակը։

Գրքին կցված են արխիվային ու պատմողական բնույթի վավերագրեր և գրականության ցանկ։

Ա. Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆՑ — «Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորումը և զարգացումը». Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 360 էջ. գինը՝ 1 ռ. 17 կոպ.։

Աշխատությունը լույս է տեսել ռուսերեն լեզվով։ Հեղինակը կոնկրետ փաստերի հիման վրա ցույց է տվել Սովետական Հայաստանի տեխնիկական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման պրոցեսը, ինչպես նաև նրա կատարած դերը բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման գործում։

Գիրքն ունի անգլերեն լեզվով ամփոփում, օգտագործված գրականության և անձնանունների ցանկ։